

Կամավոր վերադարձի և վերաինտգրման օժանդակություն Բելգիայից

ՄՄԿ-ն աջակցում է միգրանտներին, ովքեր ցանկանում են կամավոր վերադառնալ իրենց հայրենիք, կամ երրորդ երկիր, որտեղ երաշխավորվում է նրանց մշտական կացություն:

Ի՞նչ է ԿԱՄԱՎՈՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԿԱՐՈ՞Ղ Է ՄՄԿ-Ն ՕԳՆԵԼ ԻՆՁ ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱ ԱՇԽԱՏՈՒՄ ՈՒ՞Ր ՊԵՏԿ Է ԴԻՄԵԼ Ի՞ՆՉ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԿՍՏԱՆԱՍ

Ի՞նչ է ԿԱՄԱՎՈՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Կամավոր վերադարձը անվճար ծառայություն է այն մարդկանց համար, ովքեր մտածում են Բելգիայից իրենց ծագման երկիր վերադառնալու մասին: Եթե որոշեք, որ սա Ձեզ համար ճիշտ ընտրությունն է, ՄՄԿ-ն ԱՀԸՖԳ-ի և նրանց գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ կհոգան ամեն ինչ, ներառյալ Ձեր թոռչքի տոմսերի ամրագրումը և կապահովեն Ձեզ անհրաժեշտ փաստաթղթերը:

ԿԱՐՈ՞Ղ Է ՄՄԿ-Ն ՕԳՆԵԼ ԻՆՁ

ՄՄԿ-ն կամավոր վերադարձի օժանդակությունը կարող է տրամադրվել Բելգիայում գտնվող բոլոր միգրանտներին անկախ նրանց իրավական կարգավիճակից:

Դուք կարող եք մեզ հետ զրուցել կամավոր վերադարձի մասին՝ առանց որևէ պարտավորության: Այն ամենը, ինչ մենք կննարկենք, գաղտնի կպահվի: Առկա օգնության մասին մենք Ձեզ կտեղեկացնենք Ձեր մեկնելուց առաջ, ընթացքում և հետո:

Մեր խորհրդատուներից մեկի հետ անձնական զրույցի ընթացքում կարող եք քննարկել ցանկացած մտահոգություն, որը կարող է կապված լինել ձեր հնարավոր վերադարձի հետ: Ավելի կոնկրետ հարցերի պատասխանելու համար մենք կարող ենք կապվել մեր գործընկերների հետ Ձեր ծագման երկրի ՄՄԿ գրասենյակում:

Եթե որոշեք, որ կամավոր վերադարձը Ձեզ համար ճիշտ ընտրությունն է, ՄՄԿ-ն կարող է օգնել Ձեզ Ձեր մեկնման բոլոր նախապատրաստական աշխատանքներում:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԴԱ ԱՇԽԱՏՈՒՄ

Կամավոր վերադարձի համար դիմելուց հետո, ՄՄԿ-ն կկապվի ձեզ հետ խորհրդատվության համար, որի ընթացքում կբացատրվեն բոլոր մանրամասները: ՄՄԿ-ն կարող է օգնել Ձեզ Ձեր ճանապարհորդական փաստաթղթերը ստանալու համար և կբացատրի ձեզ անհրաժեշտ քայլերը: Երբ Դուք պատրաստ լինեք ճանապարհորդելու, ՄՄԿ-ը կամրագրի Ձեզ անհրաժեշտ տոմսերը: ՄՄԿ - ը կօգնի Ձեզ Բրյուսելի օդանավակայանում մեկնելիս, բայց Դուք ուղևորվելու եք որպես սովորական ուղևոր: Անհրաժեշտության դեպքում, ՄՄԿ-ն օդանավակայաններում կարող է աջակցություն ցուցաբերել տարանցման ընթացքում և ժամանումից հետո:

ՈՒ՞Ր ՊԵՏԿ Է ԴԻՄԵԼ

Եթե Դուք բնակվում եք ընդունելության կենտրոնում, կարող եք դիմել կենտրոնի միջոցով՝ ձեր սոցիալական օգնականին խնդրելով կամավոր վերադարձի մասին ավելի շատ տեղեկություններ:

Եթե դուք բնակվում եք ընդունելության կառույցից դուրս, կամ մասնավոր հասցեում, ապա կարող եք կապվել մեր ՀԿ գործընկերներից մեկի հետ (սեղմեք [այստեղ](#) ամբողջական ցուցակի համար)՝ լրացուցիչ տեղեկությունների կամ ԱՀԸՖԳ-ն վերադարձի պատուհաններից մեկի համար: Խնդրում ենք այստեղ գտնել Ձեր բնակության վայրին մոտ գտնվող գործընկերոջ կոնտակտային տվյալները:

Վերադարձի և վերաինտեգրմանն առնչվող բոլոր հարցերի համար կարող եք կապվել՝

FR/ENG: 0491/56.05.23

NL/ENG: 0499/64.80.94

Ի՞ՆՉ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԿՍՏԱՆԱՍ

Վերադարձի ճանապարհորդության համար ՄՄԿ-

ն կամրագրի և կվճարի Ձեր ինքնաթիռի և / կամ ավտոբուսի տոմսը ինչպես

նաև ճանապարհի համար կտրամադրի գրպանի գումար, որը Դուք կստանաք օդանավակայանում:

Կախված այն երկրից, ուր Դուք վերադառնում եք, կարող եք կարող է

տրամադրվել վերաինտեգրման աջակցություն: Այդ աջակցությունը նախատեսվում է որպես նախնական աջակցություն Ձեր երկրում վերաինտեգրման համար: Մեկնելուց առաջ բոլոր դիմումատուներին կտրամադրվի տեղեկատվություն նրանց ցուցաբերվող աջակցության վերաբերյալ և կստանան իրենց երկրի ՄՄԿ-ն գրասենյակի մասին կոնտակտային տեղեկատվություն: